

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N°

Հայաստանի Հանրապետությունում ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության կտրոնների տրամադրման, հաշվառման և շրջանառության վերաբերյալ

«-----»-----2019թ.

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուփար Սամվել Ամիրխանյանի /այսուհետ՝ Նախարարություն/, մի կողմից և «---
--- բանկ» Ընկերությունը, ի դեմս ----- /այսուհետ՝ Բանկ/, մյուս կողմից, միասին անվանելով Կողմեր,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 31.03.2011թ. թիվ 350-Ն որոշումը /այսուհետ՝ Որոշում/, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Բանկի կողմից տեխնիկական զննության կտրոններ /այսուհետ՝ Կտրոններ/ ստանալու նպատակով Որոշմամբ սահմանված ձևով լրացված հայտ ստանալու դեպքում Բանկին անվճար տրամադրել համապատասխան Կտրոններ, իսկ Բանկը պարտավորվում է Կտրոններն օգտագործել և հաճախորդներին տրամադրել բացառապես օրենքով և Որոշմամբ սահմանված կարգով, վարել դրանց հաշվառում և դրանց շրջանառության վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել Նախարարությանը:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. **Նախարարությունն իրավունք ունի**

2.1.1. Կտրոններ չտրամադրել Բանկին, եթե՝

ա) Բանկը սահմանված կարգով չի վարում Կտրոնների օգտագործման հաշվառում.

բ) սահմանված կարգով և ժամկետներում Նախարարություն չի ներկայացնում Կտրոնների օգտագործման և շրջանառության վերաբերյալ հաշվետվություններ.

գ) Բանկը դեռևս ամբողջությամբ չի օգտագործել նախկինում իրեն տրամադրված Կտրոնները և ունի յուրաքանչյուր մասնաճյուղի հաշվով առնվազն 50 հատ կտրոն:

2.2. Նախարարությունը պարտավոր է

2.2.1. Կտրոնները Բանկին տրամադրել անվճար.

2.2.2. Սույն պայմանագրի կնքման պահից 5 օրյա ժամկետում Բանկին տրամադրել այն համապատասխան բանկային հաշիվների վերաբերյալ տվյալները, որոնց փոխանցվելու են գույքահարկի, բնապահպանական հարկի, պետական տուրքի և այլ գումարները, ինչպես նաև այդ հաշիվների հետագա բոլոր փոփոխությունները.

2.2.3. Բանկին գրավոր կամ էլեկտրոնային հաղորդագրության միջոցով տեղեկացնել Կտրոնների տրամադրման հետ կապված նորմատիվ իրավական ակտերում կատարված փոփոխությունների, այդ թվում գույքահարկի, բնապահպանական հարկի, պետական տուրքի դրույքաչափերում կատարված փոփոխությունների մասին՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 5 օր առաջ.

2.2.4. Բանկին տրամադրել պատշաճ որակի Կտրոններ:

2.3. Բանկն իրավունք ունի

2.3.1. Միակողմանիորեն դադարեցնել սույն պայմանագրի գործողությունը, այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Նախարարությանը՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վերջինիս վերադարձնելով չօգտագործված Կտրոնները, ինչպես նաև ներկայացնելով օգտագործված Կտրոնների վերաբերյալ հաշվետվությունները:

2.4. Բանկը պարտավոր է

2.4.1. Կտրոնները տրամադրել Բանկի գլխամասային գրասենյակում և Հայաստանի Հանրապետության գործող իր բոլոր մասնաճյուղերում (բացառություն են կազմում միայն ԼՂՀ տարածքում գործող բանկերը և մասնաճյուղերը)։

2.4.2. Օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել Նախարարության կողմից իրեն տրամադրված Կտրոնների հաշվառում։

2.4.3. Որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հաշվետվություններ ներկայացնել Նախարարությանը՝ Կտրոնների օգտագործման և շրջանառության վերաբերյալ։

2.4.4. Սույն պայմանագրի գործողության դադարեցման դեպքում, ինչպես նաև օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում Նախարարությանը վերադարձնել չօգտագործված Կտրոնները։

2.4.5. Կտրոնների փչացման կամ կորստի դեպքում անհապաղ հայտնել Նախարարությանը։

3. Պատասխանատվություն

3.1. Կողմերը սույն պայմանագրով իրենց պարտականություններն ու պարտավորությունները չկատարելու համար կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

4.1. Սույն պայմանագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա էականորեն ազդող անհաղթահարելի ուժի և ֆորս-մաժոր համարվող պայմանների ազդեցության։

5. Վեճերի լուծման կարգը

5.1. Կողմերի միջև սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ։ Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.Այլ դրույթներ

6.1.Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից՝ յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

6.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է անժամկետ:

6.3. Սույն պայմանագիրը միակողմանի կարող է լուծվել Կողմերից մեկի գրավոր այդ մասին մինչև լուծման ամսաթիվը առնվազն 5 օր առաջ մյուս կողմին տեղեկացնելուց հետո:

6.4.Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.Կողմերի ռեկվիզիտները և ստորագրությունները

Նախարարություն

Քանկ

ք. Երևան, Վ.Սարգսյան 3/3

(ստորագրություն)

(ստորագրություն)